



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019 թվականի թիվ 20-Ն

ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի մարտի 12-ի «Հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանի վարման կարգը հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին պարբերությունում «14» թիվը փոխարինել «13» թվով,

2) Որոշման և Որոշմամբ հաստատված Հավելվածում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով» բառերը փոխարինել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով» բառերով,

3) Որոշման Հավելվածի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

4) Որոշման Հավելվածի 5-րդ կետում «և կնքվում են հեռուստառադիոընկերության կնիքով» բառերը փոխարինել «են, **կարվում** և հաստատվում են հեռուստառադիոընկերության կողմից «Բաղկացած ----- թերթից» գրառմամբ և ստորագրությամբ» բառերով,

5) Որոշման Հավելվածի «Հաշվառման մատյանը վարելու ուղեցույց»-ի 8-րդ պարբերությունից հանել «և հեռուստառադիոընկերության կնիքով» բառերը:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

11 մարտի 2019թ.

ք. Երևան